ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
(ՀԻՄՆԱԴՐԱՄ)

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Երևան 2016

«ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ»-ը նախատեսված է ՀԱՊՀ բակալավրական/մագիստրոսական կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների ուսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար, կօգնի գործընթացը կազմակերպելու պրակտիկաներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Այն հնարավորություն կտա ուսանողին՝ պատկերացում կազմելու պրակտիկայի կազմակերպման տարբեր փուլերի մասին, ամփոփելու պրակտիկայի արդյունքները, ինչը կնպաստի մասնագիտական հմտությունների, կարողությունների և ունակությունների ձևավորմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 4
2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 5
3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ 6
4.ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 7
5. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 11
6. ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 13
7. ՈՒՍԱՆՈՂ-ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 15
8. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ 16
9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 19

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Պրակտիկան՝ որպես մասնագետների պատրաստման կարևոր բաղադրիչ, ուղղված է սովորողների մասնագիտական կոմպետենցիաների՝ հմտությունների, կարողությունների և ունակությունների ձևավորմանը: Հիմքում ընկած է տեսական գիտելիքների և գործնական կարողությունների ինտեգրալը: Այն հնարավորություն է ընձեռում ապագա ճարտարագետներին՝ խորացնելու և ամրապնդելու մասնագիտական դասընթացներից ստացած տեսական գիտելիքները, բուհն ավարտելուց հետո ծավալելու ակտիվ գործունեություն արտադրական, գիտահետազոտական ու նախագծային գործընթացներում:

ՀԱՊՀ-ի բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի պարտադիր բաղադրիչներն են պրակտիկայի հետևյալ տեսակները.

1. Բակալավրական կրթական ծրագիր՝

- ուսումնական (տևողությունը՝ 1 շաբաթ),
- արտադրական (տևողությունը՝ 4 շաբաթ),
- նախաավարտական (առկա ուսուցում՝ տևողությունը 3 շաբաթ, հեռակա ուսուցում՝ տևողությունը 6 շաբաթ):

2. Մագիստրոսական կրթական ծրագիր՝

- հետազոտական (տևողությունը՝ 4 շաբաթ):

Պրակտիկայի ընդհանուր ղեկավարը նշանակվում է մասնագիտական/թողարկող ամբիոնի կողմից:

Պրակտիկայի անցկացման ժամկետը որոշվում է ուսումնական պլանի ժամանակացույցին համապատասխան: Տվյալ կրթական ծրագրով այն իրականացվում է հաստատված ժամկետում՝ համաձայն ուսանողների՝ պրակտիկա ուղարկվելու մասին հրամանի:

Բակալավրական կրթական ծրագրով նախատեսված արտադրական և նախաավարտական, ինչպես նաև մագիստրո-

սական կրթական ծրագրով հետազոտական պրակտիկաների ավարտից հետո, սահմանված ժամկետում, ուսանողը ներկայացնում է հաշվետվություն: Հաշվետվությունը ձևակերպվում է դրան ներկայացվող պահանջներին համապատասխան, պրակտիկայի ավարտից հետո երեք օրվա ընթացքում:

Արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների արդյունքում ուսանողը ստանում է գնահատական, իսկ ուսումնական պրակտիկայի արդյունքում՝ ստուգարք:

2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պրակտիկայի նպատակը

Պրակտիկայի նպատակն է ամրապնդել ուսանողների՝ մասնագիտական տեսական և գործնական գիտելիքների կապը, ձևավորել ապագա ճարտարագետների արտադրական, գիտահետազոտական, նախագծային գործունեության ընթացքում աշխատելու կարողություններ և հմտություններ:

Պրակտիկայի խնդիրները

- տեսական ուսուցման ընթացքում ուսանողների ստացած գիտելիքների խորացում և ընդլայնում,
- մասնագիտական, գործնական կարողությունների և արտադրությունում աշխատելու հմտությունների ձևավորում,
- մասնագիտական խնդիրների լուծման մեթոդներին և տեխնոլոգիաներին տիրապետելու ունակության զարգացում,
- ծանոթացում մասնագիտական ընկերության/կազմակերպության նորարարական գործունեությանը,
- մասնագիտական գործունեությանն առնչվող իրավական, տեխնիկական, տեխնոլոգիական և տնտեսական հարցերի ուսումնասիրություն:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

ՈՒսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաները, ուսումնական գործընթացի կազմակերպման օրացուցային պլաններով նախատեսված ժամկետներում, կարող են անցկացվել՝

- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ամբիոններում,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի բազային գիտահետազոտական լաբորատորիաներում,
- արտադրական կազմակերպություններում և ընկերություններում,
- գիտահետազոտական և նախագծային կազմակերպություններում:

Ուսանողների պրակտիկան կազմակերպվում է՝ համաձայն համապատասխան հրամանի:

4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4.1. ՈՒսումնական պրակտիկան ունի ճանաչողական բնույթ:

Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողը ստանում է ընդհանուր տեղեկություններ իր մասնագիտությանը հարող հիմնարկ-ձեռնարկությունների մասին: Ծանոթանում է տվյալ ընկերության/կազմակերպության պատմությանը, գործունեությանը, նշանակությանը, թողարկվող արտադրանքին և տեխնիկական տվյալներին: ՈՒսանողներին հանձնարարվում է բնութագրել իրենց մասնագիտությամբ արտադրության զարգացման հեռանկարային ուղին:

4.2. Արտադրական պրակտիկա

Արտադրական պրակտիկայի ընթացքում ուսանողը հետևում է ղեկավարից ստացած անհատական պլանին, որով տրվում են հանձնարարականներ.

4.2.1. ծանոթանալ ընկերության/կազմակերպության /լաբորատորիայի կառուցվածքին և գործունեությանը,

4.2.2. ուսումնասիրել աշխատանքի պլանավորման մեթոդները,

4.2.3. ծանոթանալ ընկերության/կազմակերպության/լաբորատորիայի առանցքային բաժինների աշխատանքներին, դրանց կողմից կիրառվող տեխնոլոգիաներին, օգտագործվող նյութերին և սարքավորումների տեխնիկատնտեսական ցուցանիշներին:

4.2.4. ծանոթանալ նորմատիվային փաստաթղթերին, ստանդարտներին, կիրառական ծրագրերի փաթեթներին,

4.2.5. կատարել ընկերության/կազմակերպության կողմից նշանակված ղեկավարի անհատական հանձնարարականը,

4.2.6. կազմել պրակտիկայի հաշվետվությունը՝ մշակված նյութերի կցումով:

Արտադրական պրակտիկայի արդյունքում ուսանողը ձեռք է բերում փորձարարական, շահագործման, սպասարկման հմտություններ և մասնագիտական գրագրություն վարելու կարողություններ:

4.3.Նախաավարտական պրակտիկա

Նախաավարտական պրակտիկայի ընթացքում ուսանողը հետևում է ղեկավարից ստացած անհատական պլանին, որով տրվում են դիպլոմային աշխատանքի կատարման հանձնարարականներ.

4.3.1.ուսումնասիրել ստանձնած դիպլոմային աշխատանքում նախագծվող օբյեկտը,

4.3.2.ծանոթանալ նախագծվող օբյեկտի կառուցվածքին, օգտագործվող տարրերի ցանկին, տեխնիկական բնութագրերին, տեխնոլոգիական սխեմաներին,

4.3.3.ուսումնասիրել օբյեկտի տեխնիկատնտեսական ցուցանիշները,

4.3.4.կատարել դիպլոմային աշխատանքի թեմայով գրականության վերլուծություն (ակնարկ),

4.3.5.ուսումնասիրել նախագծակոնստրուկտորական աշխատանքների ավտոմատացման մեթոդները,

4.3.6. ծանոթանալ նախագծման ինքնարժեքի իջեցման միջոցներին և տնտեսական արդյունավետության հաշվարկի մեթոդին,

4.3.7. ուսումնասիրել նախագծվող օբյեկտի գործնական կիրառությանն առնչվող խնդիրները,

4.3.8. ուսումնասիրել տեխնիկական անվտանգության նորմատիվային փաստաթղթերը,

4.3.9. կազմել պրակտիկայի հաշվետվությունը՝ մշակված նյութերի կցումով:

Նախադիպլոմային պրակտիկայի անցկացման արդյունքում ուսանողը ձեռք է բերում փորձարարական հմտություններ, մոդելավորման կարողություններ, մասնագիտական գրագրություն վարելու և խնդիրների լուծման կարողություններ:

4.4. Հետազոտական պրակտիկա

Հետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողը հետևում է ղեկավարից ստացած անհատական պլանին, որով տրվում են հետազոտական աշխատանքի կատարման հանձնարարականներ.

4.4.1. ծանոթանալ պրակտիկայի անցկացման վայրի՝ լաբորատորիայի/կենտրոնի/ընկերության/կազմակերպության ենթակառուցվածքին, հիմնական գործունեությանը, տեխնիկական հագեցվածությանը, դրանց կողմից կիրառվող տեխնոլոգիաներին և վերջիններիս իրականացման հնարքներին,

4.4.2. ուսումնասիրել և հավաքագրել մագիստրոսական թեզի թեմայի կամ ուսումնառության պրոֆիլին համապատասխանող փաստացի նյութեր և տեղեկատվություն,

4.4.3. մասնակցել պրակտիկայի անցկացման վայրում իրականացվող աշխատանքներին, մասնավորապես լաբորատորիայի/կենտրոնի/ընկերության/կազմակերպության հետազոտական աշխատանքներին,

4.4.4. ուսումնասիրել պրակտիկայի անցկացման վայրում օգտագործվող սարքավորման շահագործման կարգը և տվյալ մասնագիտական բնագավառի հետազոտություններում օգտագործվող կիրառական ծրագրային փաթեթները,

4.4.5. կազմել պրակտիկայի հաշվետվությունը՝ մշակված նյութերի կցումով:

5. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ՈՒսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների կազմակերպումը և մեթոդական ապահովվածությունն իրականացնում է մասնագիտական/թողարկող ամբիոնը:

ՈՒսանողները գործուղվում են պրակտիկայի վայրը՝ համաձայն համալսարանի և ընկերությունների/կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի:

ՈՒսանողներին թույլատրվում է պրակտիկան անցկացնել իրենց կողմից ընտրած ընկերություններում/կազմակերպություններում: Դրա համար ուսանողը պետք է պրակտիկան սկսվելուց ոչ ուշ, քան 2 ամիս առաջ ինստիտուտի/ֆակուլտետի ղեկավարությանը ներկայացնի նամակ՝ տվյալ կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ, որով կազմակերպությունը ցանկություն է հայտնում կազմակերպել ուսանողի պրակտիկան՝ առաջարկելով արտադրությունում/հիմնարկում պրակտիկայի ղեկավարի տվյալները (Հավելված 1.):

Պրակտիկայի անցկացման հրամանը պետք է ստորագրված լինի տվյալ կրթական ծրագրի ուսումնական պլանի ժամանակացույցով նախատեսված ժամկետից (պրակտիկայի սկսվելուց) առնվազն 5 օր առաջ: Հրամանը ներկայացվում է պրակտիկան անցկացնող ընկերություն/կազմակերպություն:

Ելնելով կրթական ծրագրի առանձնահատկություններից՝ պրակտիկան կարող է անցկացվել մի քանի ընկերություններում/կազմակերպություններում: Այդ դեպքում պրակտիկայի կազմակերպման հրամանում պետք է ներկայացվի ժամանակացույց՝ ըստ օրերի և ընկերությունների/կազմակերպությունների:

Պրակտիկայի ավարտին ուսանողները համալսարանի կողմից նշանակված ղեկավարին են հանձնում ընկերության/կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրված օրացուցային պլանը, օրագիրն ու հաշվետվությունը (Հավելվածներ 2,3,4):

Պրակտիկայի առաջին օրը ուսանողները պարտադիր ծանոթանում են անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության ընդհանուր դրույթներին, ինչպես նաև՝ լուծվում են կազմակերպչական հարցեր: Հետագա օրերին պրակտիկան անցկացվում է՝ համաձայն օրացուցային պլանի:

6. ԱՄԲԻՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների մեթոդական և գիտական ղեկավարումն իրականացնում են մասնագիտական/թողարկող ամբիոնի կողմից նշանակված դասախոսները: Պրակտիկայի սկսվելուց առաջ ղեկավարը պետք է հրահանգավորի ուսանողներին դրա անցկացման առանձնահատկությունները, բացատրի պրակտիկայի նպատակը, խնդիրները, բովանդակությունը, նշանակությունը, օրացուցային պլանի և օրագրի լրացման կարգը, պրակտիկանտ – ուսանողի իրավունքներն ու պարտականությունները, հաշվետվության ձևակերպման պահանջներն ու բովանդակությունը, հանձնման ժամկետն ու կարգը:

Ամբիոնի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարը պարտավոր է.

- կապ հաստատել ընկերության/կազմակերպության կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի հետ, պրակտիկայի սկսվելուց առաջ լուծել կազմակերպչական հարցեր,
- համաձայնեցնել ուսանողների պրակտիկայի ժամանակացույցը,
- պրակտիկայի անցկացման ծրագիրը համաձայնեցնել ընկերության/կազմակերպության կողմից նշանակված ղեկավարի հետ,
- ապահովել պրակտիկայի անցկացման բարձր որակը՝ համապատասխան ուսումնական ծրագրին և պլանին,
- կազմակերպել խորհրդատվություն՝ ուսանողների կողմից օրագրի լրացման, հաշվետվության կազմման, անհրաժեշտ նյութերի հավաքագրման և մշակման վերաբերյալ,

- հաստատված ժամկետում ընդունել ուսանողների հաշվետվությունները:

Ամբիոնի կողմից նշանակված ղեկավարը պարտավոր է ուսանողի հաշվետվության դիտարկման արդյունքում կատարել դրա բովանդակությանը և ձևակերպմանը վերաբերող դիտողություններ, տալ հարցեր, գնահատել ուսանողին՝ ներկայացրած հաշվետվության, անհատական հանձնարարությունների կատարման և հաճախումների հիման վրա:

7. ՈՒՍԱՆՈՂ-ՊՐԱԿՏԻԿԱՆՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական, արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկայի սկսվելուց առաջ ուսանողը պետք է ունենա պրակտիկայի ծրագիրը, օրագիրը և օրացուցային պլանը:

ՈՒսանողը պարտավոր է.

- ժամանակին ներկայանալ պրակտիկային,
- հանձայն պրակտիկայի պլանի և անհատական հանձնարարականի՝ հավաքել, համակարգել և վերլուծել անհրաժեշտ տեղեկությունները,
- կատարել պրակտիկայի ղեկավարի հանձնարարականները և պահպանել աշխատանքային կարգապահությունը,
- մշտապես գրանցել պրակտիկայի օրագիրը՝ ներկայացնելով կատարված աշխատանքի համառոտ նկարագիրը,
- պրակտիկայի ավարտին պատրաստել հաշվետվությունը,
- հաշվետվությունը և օրագիրը ներկայացնել ընկերության/կազմակերպության ղեկավարին՝ ստուգման ու ստորագրման համար և հանձնել համալսարանի կողմից նշանակված ղեկավարին:

Հարգելի պատճառով (հաստատող փաստաթղթի առկայության դեպքում) պրակտիկայի ծրագիրը չկատարած ուսանողը կարող է պրակտիկան անցնել ավելի ուշ՝ նշանակված ժամկետում՝ մասնագիտական ամբիոնի կողմից նշանակված դասախոսի ղեկավարությամբ:

ՈՒսումնական/արտադրական/նախաավարտական/հետազոտական պրակտիկայի ծրագիրը անհարգելի պատճառով չկատարած կամ բացասական գնահատված ուսանողը հեռացվում է համալսարանից, իսկ նախաավարտական պրակտիկա չանցած ուսանողը չի թույլատրվում դիպլոմային պաշտպանությանը:

8. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Արտադրական, նախաավարտական և հետազոտական պրակտիկաների անցկացման ընթացքում ուսանողը գրանցումներ է կատարում օրագրում, որը նշագրվում է պրակտիկայի ղեկավարի կողմից, իսկ ավարտին ներկայացնում է հաշվետվություն (մինչև 15 մեքենագիր էջ):

Հաշվետվության կառուցվածքային բաղադրիչները և բովանդակությունը.

1. տիտղոսաթերթ (Հավելված 4),
2. պրակտիկայի օրացուցային պլան,
3. ներածություն, որում ներկայացվում են պրակտիկայի նպատակը, խնդիրները, անցկացման վայրը, սկիզբը, տևողությունը, պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների և առաջադրված խնդիրների ցուցակը,
4. հիմնական մաս, որում ներկայացվում են.

4.1. անհատական առաջադրանքի կատարման նկարագիրը (արտադրական պրակտիկայի համար),

4.2.դիպլոմային աշխատանքի թեմային առնչվող աշխատանքների և անհատական առաջադրանքի կատարման նկարագիրը (նախադիպլոմային պրակտիկայի համար),

4.3.հանձնարարված հետազոտական աշխատանքին առնչվող անհատական առաջադրանքի կատարման նկարագիրը, կատարված հետազոտությունների ուղղությամբ հայտնի աշխատությունների վերլուծությունը (հետազոտական պրակտիկայի համար),

4.4.ամփոփվում են պրակտիկայի ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները:

5. եզրակացություն,

6. օգտագործված գրականության ցանկ:

Պրակտիկան գնահատվում է հետևյալ ցուցանիշների հաշվառմամբ (համաձայն ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգի).

- պրակտիկային կանոնավոր հաճախում,
- գործնական առաջադրանքի կատարում,
- հաշվետվության ձևակերպում և հանձնում:

Հավելված 1

ՀԱՊՀ _____ինստիտուտի

տնօրեն /ֆակուլտետի դեկան

_____

(Գիտ. աստիճան, կոչում, Անուն, Հայրանուն, Ազգանուն)

_____ ի դեմս _____

_____

(Կազմակերպության անվանումը Կազմ. ղեկավարի Ա, Հ, Ա)

Համաձայն է _____պրակտիկայի

անցկացման համար ընդունել_____

(Պրակտիկայի տեսակը)

_____մասնագիտության

(Մասնագիտության անվանումը)

բակալավրի/մագիստրոսի կրթական ծրագրով սովորող_____

կուրսի ուսանող _____

(ՈՒսանողի Անուն, Հայրանուն, Ազգանուն)

Մեր կազմակերպության կողմից պրակտիկայի ղեկավար է

նշանակվում _____

(Պաշտոնը, Անուն, Հայրանուն, Ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____

(Ազգանուն, Անուն, Հայրանուն)

(ստորագրություն)

Հավելված 2

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Պրակտիկայի տեսակը_____

ՈՒսանող _____

Խումբ_____

Ինստիտուտ/Ֆակուլտետ_____

Ամբիոն _____

Մասնագիտություն_____

Թիվ	Ժամ	Պրակտիկայի թեմայի անվանումը	Պրակտի կայի անցկաց-ման օրը	Պրակտի-կայի ղեկավարի ստորագրու-թյունը
1.	2.			
2.	4.			
3.	2.			
4.				
5.				
6.				

Դասախոս՝ _____

Ուսանող՝ _____

Հավելված 3

Պրակտիկայի օրագիր

Պրակտիկայի տեսակը_____

ՈՒսանող _____

Խումբ_____

Ինստիտուտ/Ֆակուլտետ_____

Ամբիոն_____

Մասնագիտություն_____

Թիվ	Պրակտիկայի թեմայի անվանումը	Օրը	Գնահա-տականը	Պրակտիկայի ղեկավարի նշումները
1				
2				
3				
.				
.				
.				
.	Հաշվետվության պատրաստում			

Դասախոս՝ _____

Ուսանող՝ _____

Հավելված 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ/ՆԱԽԱԱՎԱՐՏԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒսանող _____

Ինստիտուտ/Ֆակուլտետ_____խումբ_____

Մասնագիտություն_____

Պրակտիկան կայացել է _____
(Կազմակերպության անվանումը)

20__թ. _____ մինչ_____

Պրակտիկայի ղեկավար՝ _____
(Պրակտիկայի ղեկավարի Ա.Ա.Հ., պաշտոն)

Պրակտիկայի անցկացման կազմակերպության
ղեկավար՝ _____
(Պրակտիկայի ղեկավարի Ա.Ա.Հ., պաշտոն)

Երևան 2016